«ՄԻ ՁԱՐԱԾԱՀԵՔ ԱՍՏԾՈ ՆԵՐՈՂԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ»

(Քարոզ՝ խոսված Մայր տաճարում 1995 թ. մարտի 12-ին)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի հավատացյալ եղբայրներ և քույրեր,

Ահա արդեն ետևում մնացին պահոց երկու շաբաթները, որոնք մեզանից յուրաքանչյուրը փորձեց անցնել առավելագույն պահեցողությամբ, զղջմամբ ու աղոթքով: Եվ այսօր ահա հասել ենք այն հանգրվանին, երբ Ավետարանի սուրբ ընթերցմամբ մեր հոգիներից ներս մեկ անգամ ևս վերանորոգեցինք անառակ որդու կերպարը՝ կերպար, որ երկու հազարամյակ շարունակ մարդկանց կոչում է զղջման, ապաշխարության և դարձի առ Աստված:

Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, իմաստալից պատումներով ու խոսքերով ներկայացնելով իր քարոզչությունը, մեկը մյուսից ավելի գեղեցիկ առակներ ու պատմություններ էր պատմում, որպեսզի յուրաքանչյուրի համար հասկանալի լիներ և յուրաքանչյուրի սրտի խորքում դաջվեր, մնար որպես կենդանի իրողություն և իրականություն: Հաճախ Տիրոջը մեղադրում էին այն բանի համար, որ շրջում է մեղավորների ու մաքսավորների հետ, և ոչ թե արդար կարծեցյալ փարիսեցիների. ահա այս իրողությանը դեմ-հանդիման Հիսուս Քրիստոս պատմում է այս առակը, որի բովանդակությունը կարճառոտ կերպով մեկ անգամ ևս վերակոչելը, կարծում եմ, մեզ կօգնի զղջման ու ապաշխարության մեր գործընթացում:

Հիսուս Քրիստոս պատմում է, որ մի մեծատուն ուներ երկու որդի: Ժամանակի ընթացքում կրտսեր որդին մոտենում է հորը և ասում. «Հայր, տուր ունեցվածքիդ այն բաժինը, որ ինձ է հասնում, որովհետև ես ուզում եմ անջատվել և ապրել առանձին, անկախ ու ազատ»: Հայրը տրտմում է իր հոգու խորքում, սակայն չի կարողանում մերժել զավակին, որովհետև սիրում էր նրան, և կատարում է նրա ցանկությունը: Կրտսեր որդին վերցնում է իր ունեցվածքը, հեռանում է օտար աշխարհ և այնտեղ վատնում ողջ հարստությունը, որովհետև ապրում էր անառակ վարքով ու կենցաղով: Երբ հապ-

նում է այն աստիճանի, որ այլևս ոչինչ չուներ մսխելու, ստիպված ամենավատթար աշխատանքին է անցնում: Դառնում է խոզարած և իր որկորն ու որովայնը լցնում այն ուտեստեղենով, որ պատրաստված էր ոչ թե մարդկանց, այլ խոզերի համար: Ընկելով դառնության բաժակի ողջ մրուրը՝ վերջիվերջո հասկանում է և վերադառնում այն ճշմարիտ գիտակցությանը, թե՝ «իմ հայրը բազում ծառաներ ունի իր տան մեջ, ովքեր մարդուն արժանավայել կենցաղավարությամբ են ապրում և օգտվում են միևնույն սեղանից, որտեղից օգտվում են իմ հայրն ու իմ եղբայրը: Ուստի ավելի լավ է վերադառնամ և ասեմ. «Հայր, մեղանչեցի երկնքի և քո առջև, արժանի չեմ այլևս քո որդին կոչվելու: Ինձ ընդունիր որպես քո ծառաներից մեկը»:

Եվ այս զղջման գիտակցությանը հաջորդում է քայլը. անառակ որդին իր ցնցոտիների մեջ շարժվում է դեպի հոր ապարանքը: Հայրը հեռվից տեսնելով՝ ընդառաջ է վազում իր որդուն, գրկում, համբուրում է, ապա կանչում է ծառաներին և ասում. «Հանեք նրա վրայից ցնցոտիները և հագցրեք այն առաջին պատմուճանը, փոխեք նրա քրքրված կոշիկները և ձեռքին հագցրեք արքայական մատանին, որովհետև այս որդին կորած էր և գտնվեց, մեռած էր և հարություն առավ»:

Այդ պահին, երբ ապարանքում ուրախության և ցնծության մեջ էին, դաշտից վերադառնում է ավագ որդին և, լսելով ցնծության այս աղաղակները, հարցնում է ծառաներից մեկին, թե այս ի՞նչ ուրախություն է ներսում: Ծառան պատասխանում է. «Քո կրտսեր եղբայրն է վերադարձել, և հայրդ ամենապարարտ եզը մորթեց՝ նրան պատվելու համար»: Ընդոստանում է ավագ որդին և չի ուզում ներս մտնել: Հայրը դուրս է գալիս և աղաչում նրան, որպեսզի ներս գա: Նա պատասխանում է՝ ասելով. «Այսքան տարիներ հավատարմորեն ես քեզ ծառայեցի, և դու նույնիսկ մեկ ուլ չտվեցիր ինձ, որպեսզի իմ ընկերների հետ վայելեմ: Եվ ահա եկել է այս անառակը, որ ամբողջ ունեցվածքը վատնեց ուրիշների հետ, և այսօր դու նրան այսպիսի պատիվների ես արժանացնում»: Հայրը պատասխանում է ավագ որդուն. «Որդյակ, այն, ինչ որ ունեմ ես, քոնն է և մնալու է քեզ հավիտյան: Սակայն մենք հիմա պետք է ուրախ լինենք, որովհետև քո եղբայրը, որ կորած էր՝ գտնվեց և որ մեռած էր՝ հարություն առավ»:

Սիրելի եղբայրներ և քույրեր, ահա այս առակի խորիմաստ բովանդակության հետևում է թաքնված զղջման ու ապաշխարության բժշկարար ընկալումը, նաև անքննելի ու անմեկնելի այն խորհուրդը, որ մենք կոչում ենք աստվածային ներողամտություն: Հիրավի, մարդն իր կյանքի կարճատոտ ընթացքում բազմիցս, ամեն րոպե ու ամեն վայրկյան հանդիպում է աստվածային ներողամտության զանազան դրսևորումներին: Արդեն իսկ այն փաստը, որ հակառակ մեր մեղանչական ու մեղավոր գոյավիճակին, Աստված մեզ թույլ է տալիս մոտենալ Իր անապական ու կենսական խորհրդին, խոսում է աստվածային ներողամտության անընդգրկելիության ու անսահմանափակության մասին: Սակայն անառակ որդու առակը սոսկ չի հիշեցնում մեզ Աստծո ներողամտության մասին, որպեսզի հանգստանանք ու անդորրության մեջ նիրհենք այն գաղափարով, թե Աստված ներողամիտ է և վերջիվերջո ներելու է մեզ: Այո՛, Աստված ներողամիտ է բոլոր նրանց նկատմամբ, ովքեր դարձի են գալիս, զղջում են, ապաշխարում են և իրենց երեսի հետ միասին նաև իրենց հոգին են շրջում դեպի Հայրը՝ Աստված:

Եվ երբ այս հայեցակետով ենք մոտենում առակին, մեզ սկսում է մտահոգել մի հարց. ի՞նչ էր լինելու անառակ որդու վիճակը, եթե նա դարձի

չգար և չվերադառնար: Արդյո՞ք ըմբռշխնելու էր աստվածային ներողամտության նույնքան համապարփակ ըմպանակը: Կամ ի՞նչ էր լինելու, եթե անառակ որդին վերադառնար հոր տունը, սակայն հոր օջախը վերածեր անառակության մի որջի և իր անառակությունը տարածեր հայրենական հարկից ներս: Այսօր թվում է, թե մեզանից յուրաքանչյուրը պետք է խորհրդածի նաև այս հարցերի վրա, որոնք մեզ օգնում են հասկանալու այս խորիմաստ պատգամն իր ողջ ծավալման մեջ:

Այսօր էլ մեր մեջ կան շատ մարդիկ, ովքեր, այո՛, ապրում են անառակությամբ, և սակայն զղջման ու ապաշխարության ոչ մի արտասուք իրենց հոգուց չի ծնվում: Ապրում են անառակությամբ և շարունակում են ապրել այդպես, երբեք չփորձելով մոտենալ հայրենական օջախին: Կան և այնպիսիները, ովքեր, այո՛, երբ հասնում են ամբողջական սնանկության, հասկանում են իրենց հետագա գոյության ողջ անիմաստությունը, վերադառնում են դեպի հայրը, սակայն իրենց անառակությունն են բերում այնտեղ: Ահա այդպիսիների նկատմամբ երբեք աստվածային ներողամտություն չի կարող լինել Աստվածաշնչական մյուս պատգամների լույսի տակ: Քանզի Ավետարանական պատգամը հստակ տարբերակում է մտցնում մեղավոր մարդկության երկու դասերի միջև: Որովհետև կան մեղավորներ, ովքեր արժանի են մեր գութին, աղոթքին, խնամքին, կարեկցանքին, և կան մարդիկ, ովքեր սատանայի գործիք են և սատանայի որդիներ: Նրանց համար ներողամտություն, գութ ու կարեկցանք չի կարող լինել, քանզի նրանց գոյության նպատակը սատանային ծառայելը և այս աշխարհում սատանայի որդիների թիվը շատացնելն է:

Նայենք մեր շուրջը և ինքներս մեր մեջ, ու կտեսնենք, որ կան մարդիկ, ովքեր երբեք ծառ չեն տնկել, սակայն ծառ ու անտառ տնկողների վրա ցեխ ու լուտանք են շպրտում և ավելին, հավակնում են անտառապահ դառնալ:

Կան մարդիկ, ովքեր գեթ մեկ հոգու դարձի չեն բերել առ Աստված՝ նույնիսկ իրենց ընտանիքի անդամներին, և փորձում են ստվեր ձգել նրանց վրա, ովքեր բազմաթիվ, բազմահարյուր մարդկանց առաջնորդել են դեպի Աստված, նրանց ձեռքից բռնած առաջնորդել են դեպի տաճար՝ ցույց տալու հավիտենական կյանքի ուղին:

Կան այնպիսի մարդիկ, ովքեր Աստծո առջև կանգնելիս երբեք «մեղայ Աստուծոյ» բացականչությունը չեն հնչեցրել իրենց հոգու խորքում, իսկ նման արտահայտություններ ունեցողներին ներկայացնում են որպես կեղծավորների:

Կան մարդիկ, ովքեր երբեք ծունկի չեն գալիս Աստծո առջև, բայց ծնկողներին ներկայացնում են որպես երեսպաշտների:

Այս շարակարգումը կարելի է շարունակել, սակայն մեր նպատակն այդ չէ, այլ շեշտել այն ճշմարտությունը, որ այսպիսի մարդկանց նկատմամբ եկեղեցին պարտավոր է իր դիրքորոշումը ճշտելու: Այն թարախապալարը, որ Եկեղեցու առողջությանն է վնասում, պետք է հեռացնել, որպեսզի Եկեղեցու մարմինը, որ Քրիստոսի մարմինն է, լինի առողջ, կենսունակ, կենսատու, և իրավապես բաշխվի Քրիստոսի մարմնի ու արյան ա՛յն հաղորդությունը, որի համար Եկեղեցին կոչված է: Ապա թե ոչ, ծայրահեղ իրավիճակների ու իրողությունների առջև կարող է իրեն գտնել յուրաքանչյուր հավատացյալ և Եկեղեցու յուրաքանչյուր անդամ:

Պատկերացրեք մի գեղաձիծաղ լիճ, որտեղ լողում են զանազան գեղեցկագույն ձկներ, և նաև այնտեղ ապրում են գորտեր, որոնք իրենց կլոկլոռոցով աղավաղում են մթնոլորտը: Կարող է պատահել, որ այդ գորտերը շատանան, բազմանան և ավելի մեծ թիվ կազմեն, քան գեղեցիկ ձկնիկները: Սակայն այդ լիճն արդեն կդադարի լիճ լինելուց և կվերածվի ճահճի:

Պատկերացրեք մի հսկայական գեղեցիկ պարտեզ, ուր կողք-կողքի լսվում են սոխակի դայլայլն ու ագռավի կռինչը: Բայց եթե ագռավները բազմանան, սոխակները կհեռանան պարտեզից և վերջինս կվերածվի գերեզմանոցի:

Նաև Ավետարանից հիշենք որոմների առակի պատգամը: Եթե որոմը շատանա ու բազմանա, իսկ մոլախոտը փարթամանա, ապա կխեղդի այն բոլոր հասկերը, որոնք կյանք և պտուղ են տալիս, և այն դաշտը, որ կոչված էր մարդկանց հաց պարգևելու, ուրիշ ոչինչ չի տա, քան միայն մոլախոտ:

Եվ այստեղ մեզ հուշելու է գալիս անպտուղ թզենու առակը, որպեսզի ճշգրտենք մեր կեցվածքը, մեր խիղճը այսպիսի մարդկանց նկատմամբ: Դա այն առակն է, որտեղ այգեպանը տարիներ շարունակ պարարտացնում, փորում է հողը թզենու տակ, ամեն տարի հույս ունենալով, որ այն պտուղ կբերի, սակայն թզենին համառում է իր անպտղության մեջ: Ապա հնչում է Տիրոջ հրամանը. «Արդ, կտրիր և դեն նետիր այն, ինչու է երկիրը փչացնում»:

Եվ նույն ճակատագիրն է սպասում բոլոր նմաններին: Գալու են լճի պահապանները, ոչնչացնելու են գորտերին և չորացնելու են ճահիճը, նրան վերադարձնելով իր բուն կոչումը: Գալու են պարտիզպանները և քշելու են ագռավներին, և դարձյալ լսվելու է սոխակների երգը: Գալու են մշակները, հնձելու են որոմը և այն նետելու են անշեջ կրակի մեջ:

Ահա այսպիսի խորհրդածություններով ու մտածումներով երբ մոտենում ենք անառակ որդու առակին, տեսնում ենք, որ եթե մի կողմից ճըշմարիտ ու իրականանալի է աստվածային ներողամտությունը, մյուս կողմից նույնքան ակնառու է նաև այն, որ կա աստվածային բարկություն, աստվածային ցասում և աստվածային դատաստան բոլոր նրանց նկատմամբ, ովքեր համառում են իրենց անառակության մեջ և երեսով ու դեմքով չեն շրջվում առ Աստված: Նաև աստվածային ցասում գոյություն ունի այն մարդկանց նկատմամբ, ովքեր ձևականորեն սուսկ երեսն են դարձնում դեպի Աստված, սակայն իրենց աչքերը փակ են պահում այդ լույսի առջև:

Այսօր մեզանից յուրաքանչյուրը մեկ անգամ ևս պետք է մտորի այս ամենի մասին, որովհետև մեզանից յուրաքանչյուրը կոչված է լինելու այն անառակ որդին, որը վերադարձավ հայրենական օջախ: Այո՛, մեզանից ոչ ոք անմեղ չէ: Ամեն մեկս էլ ծանրաբեռնված ենք զանազան մեղքերով, որոնք մեզ կաշկանդում, թուլացնում ու տկարացնում են: Սակայն եթե մեր մեջ կա ցանկություն առ Աստված դառնալու և մոտենալու Աստծուն, ապա Աստված ներողամտորեն մեզ կգթա, ապաշխարություն, զղջում կպարգևի և մեր սիրտը կլցնի ուրախությամբ ու ցնծությամբ: Ուրեմն, սիրելիներ, նմանվենք անառակ որդուն այս կետում և այս իրականության մեջ, այլ ոչ թե լինենք այնպիսիք, ովքեր ամեն տարի եկեղեցու բեմից լսում են անառակ որդու մասին, սակայն համառում են մնալ իրենց պղծության ու անառակության մեջ, որպեսզի չլինի թե աստվածային դատաստանի օրոք լինենք այն անպտուղ թզենու նման, որը պետք է կտրվի ու կրակի մեջ նետվի:

Աղոթենք, որպեսզի Աստված մեկ անգամ ևս մեր սրտերի խորքում ծագեցնի ապաշխարության լույսը, որի մեջ ենք փորձում լինել հիմա՝ այս քառասնօրյա պահեցողության ու ապաշխարության շրջանում: Լինենք իրապես մեղավոր ու զղջացող ապաշխարող, որը փորձում է մոտենալ Աստծուն, որը փորձում է հաղորդվել Աստծո հետ և ընդունել կենարար ու կենսական այն ավիշը, որ մենք սուրբ հաղորդությամբ ենք ստանում:

«Շնորհք, սէր և խաղաղութիւն եղիցին ընդ ձեզ, ընդ ամենեսեանդ, ամէն»:

ՄԻՔԱՅԵԼ Ծ. ՎՐԴ. ԱԶԱՊԱՀՅԱՆ